

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԿՈՉ ԿՅՈՒՂՐԵՆ ՀԱՅՐԵՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
ՆՈՐ ՈՒՂԻ ՄԸ ԲԱՆԱԼՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԷՊԻ ԱՌԱԻԵԼ ՀԶՕՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋՆՈՐԴՈՂ**

Այս առաւօտ Անթիլիասի Մայրավանքին մէջ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան կրօնական ու քաղաքական ժողովներու խառն նիստ մը: Սոյն բացառիկ հանդիպման օրակարգի միակ հարցը վերջերս Հայաստանէն ներս ստեղծուած մտահոգիչ կացութիւնն էր:

Վեհափառ Հայրապետը տեղեակ պահեց ժողովը վերջին օրերուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիէն Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ իր միջեւ տեղի ունեցած յաճախակի խորհրդակցութիւններուն շուրջ: Վեհափառը շեշտեց յատկապէս, որ երկու Հայրապետները խորապէս մտահոգ նախագահական ընտրութիւններէն յետոյ Հայաստանէն ներս ստեղծուած կացութեամբ, որոշեցին հայրական կոչ ուղղել մեր ժողովուրդի զաւակներուն ու պատասխանատուներուն՝ հեռու մնալու անկայուն ու անապահով վիճակ ստեղծող վտանգաւոր ընթացքներէ, եւ փոխադարձ հասկացողութեամբ ամրապնդելու մեր ներքին միասնականութիւնը համախմբուելով հայրենիքի ու ազգի ընդհանրական շահերուն շուրջ: «Դժբախտաբար,- ըսաւ Վեհափառը,- նոյն օրն իսկ Երեւանի փողոցները թատերավայր դարձան այնպիսի արարքներու ու տեսարաններու, որոնք խոտոր կը համեմատին մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներուն ու ըմբռնումներուն»:

Ազգային Կեդրոնական Վարչութիւնը լսելէ յետոյ Վեհափառ Հայրապետին խօսքը, իր կարգին խոր ցաւով անդրադարձաւ Երեւանի մէջ տեղի ունեցած ցաւալի անցուդարձերուն ու անոնց ժխտական հետեւանքներուն:

Վտանգներով լեցուն այս կացութեան դիմաց, հարկ է ըլլալ խոհեմ ու իրատես: Արդարեւ, ստեղծուած այս վիճակը մեծապէս կը տկարացնէ Հայաստանի դիրքը դաւաբաղեան հարցին եւ ընդհանրապէս ազգային պահանջատիրութեան գծով, ինչպէս նաեւ միջազգային համայնքին մօտ վերապահութիւն կը յառաջացնէ Հայաստանին նկատմամբ:

Հետևաբար, Ազգային Կեղրոնական Վարչությունը կոչ կ՛յռուղէ Հայաստանի բոլոր պատասխանատուներուն եւ հայրենի մեր ժողովուրդի զաւակներուն կառչելու մեր ազգին ու հայրենիքին գերագոյն ու ընդհանրական շահերուն: Այս տագնապալից հանգրուանին, ազգային միասնականութեան կառավարութեան մը կազմութիւնը կը նկատենք կենսական՝ հայրենիքը դուրս բերելու այս անորոշ կացութենէն ու առաջնորդելու դէպի կայունութիւն ու ներքին միասնականութեան ամրապնդում:

Ազգային Կեղրոնական Վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ անմեղ զոհերու ընտանիքներուն, եւ շուտափոյթ ապաքինում կը մաղթէ բոլոր վիրաւորներուն:

Յայտնենք, որ երկու Վեհափառ Հայրապետներու որոշումով, յառաջիկայ Կիրակի բոլոր եկեղեցիներէն ներս պիտի կատարուի յատուկ հոգեհանգիստ, Մարտ 1-ին տեղի ունեցած բախումներու ընթացքին զոհուած հայորդիներու հոգիներուն համար:

3 Մարտ 2008

Անթիլիաս, Լիբանան